

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

ժամանակակից հայերենի շարահյուսության հանգուցային մի շարք հարցեր ավանդական պատկերացումների հիմքի վրա փոխանցվում են աշխատությունից աշխատություն, դասուցրրից դասագիրք: Այժմ պետք է փորձենք նրանցից երեքը վերլուծության նյութ դարձնել՝ գտնելու համար լեզվի փաստերից բխող և այդ փաստերին առավելագույն չափով համապատասխանող ճշգրտումներ ու սահմանումներ:

Մեր նպատակը չէ՝ անդրադառնալ ավանդական այս կամ այն պատկերացումը պահպանելու կամ մերժելու հետ առնչվող հարցերի: Առավել ևս միտք չունենք քննելու ավանդական անվանումների հարցը: Նրանց պահպանումը համարում ենք կարևոր, քանի որ անվանումները, հատկապես հայ քերականագիտության մեջ ընդունվածները առհասարակ, պայմանական բնույթ ունեն (ինչպես օրինակ՝ ենթակա, ստորոգյալ, բայ, անցողական, անանցողական, կրավորական, խնդիր, բայի սեռ և այլն), և իմաստ չկա արդեն ճանաչում գտած այդ և մյուս անվանումներից հրաժարվելու:

Ստորև սուկ տեսականորեն պետք է փորձենք պարզել շարահյուսական մի քանի իրողությունների առավել ճշգրիտ դիմագծերը, ցույց տալ, թե իրականում ինչ է թաքնված տարածում գտած բնութագրումների, սահմանումների տակ:

1. Կապային բառակապակցություններ

Շարահյուսական մակարդակում կապերի դասակարգումը՝ իսկական, անիսկական տեսակների և կապական բառերի, արժեք չունի: Այդ խմբավորումները արվում են ձևաբանական (և ոչ շատ հստակ) հիմքի վրա: Ի վերջո, իսկական կապերը նրանք են, որ չեն հղովվում (դեպի, րստ, համառ, մասին և այլն), անիսկական կապերը հղովվողներն են մոտ, տակ, վրա, մեջ և այլն): Շարահյուսական մակարդակում էականը կապի դերն է, կապելը, և այդ դերը կատարող ամեն մի բառ շարահյուսորեն պարզապես կապ է: Ինչպես՝ «Դրա մասին խոսվել է», «Ըստ մեր պայմանի չպիտի դնալինք», «Այդ ուղղությամբ թափված քանքերն իզուր էին», «Ուրիշի պատճառով տուժեց»: Ընդհանրապես շարահյուսորեն սուկ կապ են:

Բառակապակցությունները նույնպես վերաբերում են շարահյուսական մակարդակին՝ և հետևողական լինելու դեպքում դրանք կարելի է սահմանել այսպես՝ երկու և ավելի բառերի քերականական կապակցությունը, որ չունի նախադասության արժեք, բառակապակցություն է: Դիմավոր բայերի կազմած կապակցություններին չի տրվում բառակապակցություն անունը, որ դուրս պայմանական բացառում է: Դրանով ընդգծվում է, որ դիմավոր բայն ինքնըստինքյան և մանավանդ լրացումներով հանդերձ նախադասության կարգին է վերաբերում և պետք է առանձին քննվի: Բայց ուրիշ բացառություն անելն անհիմն է. մյուս բառերը՝ դերբայ, գոյական, ածական, թվական, մակբայ, դերանուն, կապ, ձայնարկություն կազմում են բառակապակցություններ և իմաստային կամ ձևաբանական որևէ նկատառումով նշված բառատեսակներից որևէ մեկի կազմած կապակցությունը բառակապակցությունների շարքից հանելը հիմնավորված չէ:

Երբեմն առաջնորդվելով դուրս իմաստաբանական տեսանկյունով, մի կողմ թողնելով քերականական, մասնավորապես շարահյուսական իրողությունները՝ հայերենի կապերը խոսքի

¹ Այդպիսի մի շարք այլ փորձեր արդեն արվել են Գ. Ջահուկյանի, Ս. Աբրահամյանի, Ս. Գյուլբուրգյանի, է. Աթաբեկյանի, տողերիս հեղինակի և այլոց կողմից:

մաս չեն համարում, կապը որպես կապակցության գերադաս անդամ չեն ընդունում, կապային բառակապակցությունն էլ բառակապակցություն չեն համարում: Տեսնենք ինչ են թելադրում արդի հայերենի փաստերը: Վերջենք բառերի հետևյալ շորս կապակցումները. 1. սեղանի ոտք, 2. սեղանի ոտքից, 3. սեղանի վրա, 4. սեղանի վրայից: Շարահյուսադիտական ամենա-ալարող ըմբռնումը բավական է որոշելու համար, որ № 1-ում ոտք-ը գերադաս է, սեղանի-ն նրա ստորադասն է կամ հոլով ունեցող լրացումը, այսինքն՝ խնդիրը: № 2-ում գերադասն է օտօխից-ը, սեղանի-ն՝ նրա լրացումը: Նույն մոտեցմամբ, բնականաբար, № 3-ում էլ վրա-ն է գերադաս, սեղանի-ն դարձյալ նրա լրացումը, № 4-ում գերադասն է վրայից-ը սեղանի-ն՝ նրա լրացումը:

Կա՞րող էր որևէ հիմք սեղանի օտօխից-ը համարել բառակապակցություն, իսկ սեղանի օտօխից-ը այդպիսին չհամարել: Նման հիմք չկա: Իսկ եթե սեղանի վրայից-ը, սեղանի տակից-ը բառակապակցություն են, սեղանի վրա-ն ու սեղանի տակ-ը նույն կարգի մեջ պետք է դնել:

Շարքն ընդարձակենք՝ գերադաս անդամները դնելով ա տառի, ստորադաս անդամները կամ լրացումները բ տառի տակ

բ	ա
1. հարևանի	ձևեր
2. հարևանի	ձևերից
3. հարևանի	մոտ
4. հարևանի	մոտից
5. հարևանի	մասին
6. հարևանի	պատճառով
7. հարևանի	շնորհիվ
8. հարևանից	ծածուկ
9. հարևանից	բացի
10. հարևանով	հպարտ
11. հարևանով	հանդերձ

Շարահյուսական տեսանկյունից այստեղ ունենք բ միավորներ և ա միավորներ և բ+ա հարակցություն: Նույն տեսանկյունից որևէ նշանակություն չունի, թե ա կամ բ շարքի միավորներից որը իմաստաբանական տեսակետից ինչ արժեք ունի: Հակառակ կապակցությունն է, իսկ շարահյուսորեն բոլոր 11 միավորների կապակցությունները լիովին նույնարժեք են, և որևէ հիմք չկա այդ բ+ա կապակցությունների մի մասը անվանել բառակապակցություններ, մյուս մասն այդպես չանվանել: Շարահյուսական իմաստաբանորեն միջամտողներն ասում են № 1, 8, 10 դեպքերը բառակապակցություններ են, № 2-ը հարցական է (նայած ձևերից-ը ինչ իմաստով է դորձածված), իսկ մյուսները բառակապակցություններ չեն: Հստակ ի՞նչ են: Պատասխան չկա: Եվ չի կարող լինել, քանի որ շարահյուսական մակարդակում բոլոր 11 բ+ա կապակցությունները միևնույն արժեքն ունեն և միևնույն կարգի մեջ են. անհիմն է նրանց արհեստականորեն ընդհանրելը:

Կապը բառ է: Այստեղ չենք ուզում քննել, թե ինչ է բառը, միայն կասենք, որ հայերենի ամեն մի կապ տեղ է գտնում բառարաններում, բացատրվում և մանավանդ նախադասու-թյուններում ինքնուրույն հարաբերությունների մեջ է մտնում այլ բառերի հետ: Հենց միայն այսքանով, հայերենի կապերն այնպիսի բառեր են կամ բառային այնպիսի արժեք ունեն, ինչպես գոյականները, ածականները և մյուսները: Ասում են կապերը լիարժեք իմաստ չունեն: Արդեն նշեցինք, որ շարահյուսական տեսանկյունից հակառակ կապակցական փաստերի բնույթն է, այլ ոչ կապակցվող միավորների իմաստաբանական աստիճանավորումը: Բայց թողնենք այդ իրոք ի՞նչ ասել է լիարժեք իմաստ և ոչ լիարժեք իմաստ: Օրինակ, «Դրա վերաբերյալ խոսվել է» նախադասության մեջ ո՞րն է իմաստով ավելի լիարժեք՝ դրա գերանո՞ւնը, թե՞ վերաբերյալ կապը կամ՝ «Այդ ուղղությամբ թափված ջանքերն ի դերն են իսկ» նախադասու-թյան մեջ ո՞րն իմաստով ավելի լիարժեք է՝ այդ գերանո՞ւնը, թե՞ ուղղությամբ կապը: Եվ կամ՝ եթե վրա-ն ու մեջ-ը լիմաստ չեն, ապա մի՞թե վրայով-ն ու վիջով-ն էլ են ոչ լիմաստ, իսկ վրայից-ն ու հեռվից-ը, իսկ դրանով-ը, սրանով-ը, դրանից-ը, կողմով-ը... Այսպես

կարելի է անհույս խճճվել քառերի իմաստաբանական աստիճանավորման (հիերարխիա) բավերդում՝ ոտքի տակ կորցնելով քերականական արտահայտությունների ամուր հողը:

Այդ «ոչ լիմաստության» գայթակղությունը երբեմն գալիս է հետևյալից: Հայտնի է, որ կապերը հաճախ (ոչ միշտ) հոլովական թեքությունների դեր են կատարում. օրինակ, ֆաղափ մեջ և ֆաղափում հոմանիշներ են, մեջ-ը կարծես հավասար է -ում վերջավորությունը կամ՝ «եկել էր իր երեխաներում» և «եկել էր իր երեխաների հետ»։ Ետ-ը կարծես հավասար է -ով վերջավորությունը: Նախ այս հավասարությունը լիակատար չէ, իրականում -ում-ը հավասար է -ի հոլովական վերջավորություն+մեջ (բաղաբ+ում—բաղաբ+ի+մեջ), կամ -ով-ը հավասար է -ի+հետ: Այսպիսով հայերենի կապերի մեծագույն մասը հոլովական վերջավորությունների այսպիսի համարժեք չունի:

Իսկ ամենակարևորն այն է, որ կապերի մի մասի դերի նմանությունը հոլովական վերջավորությունների դերին շարահյուսական տեսանկյունից հետաքրքրություն չունի: Փաստն այն է, որ նախադասության մեջ ֆաղափ-ն և մեջ-ը որպես երկու լիարժեք շարահյուսական-կապակցական միավոր են հանդես գալիս, իսկ ֆաղափում-ը՝ որպես մեկ այսպիսի միավոր: Օրինակ, գիտական խորհուրդ բառակապակցություն է. բաղկացած է երկու ինքնուրույն կապակցվող միավորներից, և այդ ճշմարտությունը չի կարող խանգարել այն իրողությունը, որ նույն ի-մաստը արտահայտվում է նաև մեկ բառով՝ գիտխորհուրդ. սա էլ շարահյուսորեն մեկ կապակցական միավոր է: Նույնը և ջուր կրող բառակապակցություն է, բաղկացած շարահյուսական երկու կապակցական միավորներից, և այդ ճշմարտությունը չի խախտում այն բանից, որ կա հոմանիշ ջրկիր-ը, որը շարահյուսորեն մեկ կապակցական միավոր է: Շարահյուսական նվազագույն միավորն այն է, որ շարանջուստեմն չի վերլուծվում, այլ կապակցվում է ուրիշ միավորների հետ, ուստի՝ ֆաղափ մեջ, երեխաների հետ, գիտական խորհուրդ, ջուր կրող չորս բառակապակցություններից յուրաքանչյուրը շարահյուսական տեսանկյունից բաղկացած է երկու շարահյուսորեն լիարժեք կապակցական միավորներից, իսկ ֆաղափում-ը, երեխաներում-ը, գիտխորհուրդ-ը, ջրկիր-ը շարահյուսական տեսանկյունից մեկական լիարժեք կապակցական միավորներ են:

Ասվում է, թե կապը խոսքի մաս չէ: Հապա ի՞նչ է: Եվ ի՞նչ նշանակություն ունի, թե վրա, մոտ բառերին ինչ անուն կտանք, խոսքի մաս, թե մասնիկ, թե ա կամ ի: Իականն այն է, որ դրանք կան իրրև բառ և նույնքան կարևոր են հայերենում, որքան և ցանկացած գոյականը կամ ածականը (փորձենք հանել կապերը և հայերեն խոսքի ու գրքի շինք կարող բուրդովին): Քերականական ի՞նչ նպատակ ունի բառերի նկատմամբ իմաստաբանական խտրականություն կիրառելը: Հետո, չէ՞ որ հայերենում կապեր են լինում նաև ուղղություն, պատճառ, գիծ, եր-պատակ և ուրիշ գոյականներ: Ո՞վ է կարողացել հայերեն կապերի ու գոյականների միջև ստույգ սահման դնել: Այդպիսի սահման չկա, որ գծող լինի: Եթե կապը հրաժարվում ենք խոսքի մաս համարել, ուրեմն և չպետք է ասենք կապերի խոսքիմասային արժեքը, կամ չպետք է հարցնենք՝ «Առանց-ը ի՞նչ խոսքի մաս է» (չէ՞ որ ասվում է, թե այն խոսքի մաս չէ): Ի՞նչ ենք շահում դրանից:

Վերջապես, ոչ քիչ լեզվաբանների ասում են և գրում՝ «Կապը չի կարող գոյականի համար գերադաս անդամ լինել»: Բայց ահա՝ ըստ Բո խոստման բառակապակցության մեջ փաստ է, որ նույնիսկ ըստ-ի նման «արհամարհված» կապը գերադաս է, իսկ խոստման գոյականը ստորադաս (լրացում): Կամ՝ որպես փյունիկ բառակապակցության մեջ որպես կապը փյունիկ գոյականի գերադասն է:

Ավելին. ձայնարկություններն էլ են լինում գոյականի գերադաս. օրինակ, «Երանի մեր երեխաներին» նախադասության մեջ երանի ձայնարկությունը գերադաս է, իսկ երեխաներին գոյականը նրա ստորադասը: Նույնը և՛ «Վա՛յ անօրեն մարդկանց» նախադասության մեջ. վա՛յ ձայնարկությունը գերադաս է, իսկ նրա ստորադասն է (լրացումը) մարդկանց գոյականը: Շարահյուսությունն ունի իր խիստ և հստակ կանոնները, ճիշտ չէ այդ կանոնները խմբաբաժնի մեր կյանքի, առօրյայի պատկերացումների համապատասխան, մեր մեջ կազմված լիարժեքության, ոչ լիարժեքության, բարձրի և ցածրի ըմբռնումների համաձայն: Ճիշտ չէ նաև հայերենի շարահյուսության օրինաչափությունները հարմարեցնել մի այլ լեզվի կանոններին:

Հայերենի բառակապակցություններին նվիրված որոշ աշխատություններում կամ աշխատությունների բաժիններում բառակապակցության սահմանման մեջ դրվում է լիմաստ բառերի

կապակցությամբ բնորոշումը, և, թերևս, բոլոր աշխատություններում կապերի ու ձայնարկությանների կազմած բառակապակցությունները հանվում են քննության տեսադաշտից²:

Մեր համոզմամբ, ընդհանրապես, արդի հայերենի ամբողջ շարահյուսությունը լիովին ներկայացվում է նախադասության սահմաններում, և հայերենի բառակապակցությունները նախադասությունից անջատ մանրամասնորեն քննելը անարդյունավետ է: Կարծում ենք ճիշտ կլինի բառակապակցությունների մասին նախադասության ուսումնասիրության սահմաններում տեղեկանք տալ, բայց ճշգրիտ՝ ըստ գերադասների խոսքի մասային ուրժեքի՝ բոլոր տեսակ, այդ թվում կապային բառակապակցությունների թվարկումով:

2. Միակազմ նախադասության գերադաս ահլամը

Այն բոլոր լեզվաբանները, որոնք ընդունում են ստորոգյալն իբրև շարահյուսական միավոր, միևնույն մոտեցմամբ են սահմանում այդ միավորը: Սա վերաբերում է նաև դասական ու արդի հայ բերականագիտությանը: Սահմանումները տարբերակներ ունեն, բայց էությունը նույնն է՝ ստորոգյալը արտահայտում է ենթակայի որևէ հատկանիշը և այն վերագրում ենթակային: Դպրոցական դասագրքերում այլ ձևակերպմամբ միևնույն միտքն է արտահայտվում, որ ստորոգյալը ցույց է տալիս, թե ինչ է անում, լինում կամ ինչ է ենթական (ենթակայի ինչ անելը կամ լինելը հենց նրա տվյալ հատկանիշն է):

Այսպիսով, ստորոգյալը համարվում է ենթակայի գոյությունը պայմանավորված միավոր: Ստորոգյալն իբրև շարահյուսական միավոր ընդունող լեզվաբանների կողմից նրան տրվող այլ կարգի սահմանում մեզ ծանոթ չէ, համեմատյալ դեպք, հայ բերականագիտության մեջ այդպիսին չկա: Այդպիսի սահմանում հնարավոր էլ չէ տալ, քանի որ երկկազմ (ըստ ենթակայի և ստորոգյալի) նախադասության կարգն ընդունել, արդեն իսկ նշանակում է ստորոգյալը պայմանավորել ենթակայով և ընդհակառակը՝ ենթական ստորոգյալով:

Սա նշանակում է նաև՝ նախադասության մեջ այդ միավորներից մեկի չգոյությունը (ոչ թե զեղչված լինելը, այլ չլինելը) հաստատում է մյուսի չգոյությունը: Կնշանակի, միակազմ նախադասություններում, որ միայն մեկ գլխավոր անդամ է լինում, չի կարող լինել ենթական կամ ստորոգյալ: Այսպես՝ «Տաղտկալի, ձանձրալի պատմություն» (Տ) անգեմ նախադասության գերադաս (կամ գլխավոր) անդամն է պատմություն գոյականը, որը ոչ ենթակա է, ոչ ստորոգյալ, այլ պարզապես գոյականով արտահայտված գլխավոր անդամ: «Զվարթ ու թիթե թափառել աղատ» (Տ). այս անդամ նախադասության մեջ էլ գլխավոր անդամն է թափառել գերադաս, որը, դարձյալ, ոչ ենթակա է, ոչ ստորոգյալ: «Արյունը արյունով շնն լվանա» միակազմ դիմավոր (անենթակա) նախադասության մեջ գլխավոր անդամն է շնն լվանա գոյականը, որը նույնպես ոչ ենթակա է, ոչ ստորոգյալ: Կարևոր է նկատի առնել, որ այն բանից հետո, երբ ենթական ու ստորոգյալը համարվում են երկկազմ նախադասության երկու գլխավոր (կամ գերադաս) անդամները և երբ որևէ նախադասություն համարվում է միակազմ, դրանով արդեն իսկ բացառվում է այդ միակազմում ենթակայի և ստորոգյալի որևէ գոյություն: Քանի որ եթե միակ գերադասը համարվի ենթակա, ապա ո՞ւր է նրա ստորոգյալը, և կամ եթե միակ գերադասը համարվի ստորոգյալ, ապա ո՞ւր է նրա ենթակա:

2 Տե՛ս, օրինակ, Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու. մաս 2, Երևան, 1975, էջ 3—110 (այսուհետև՝ ՀՀ): Ս. Աբրահամյան, Ն. Պասյան, Հ. Օհանյան, Խ. Բագիկյան. Ժամանակակից հայոց լեզու. հ. 3, Երևան, 1976, էջ 7—116 (այսուհետև՝ ԺՀ):

3 Տե՛ս, օրինակ, ՀՀ, 145, ԺՀ, 156:

4 Տե՛ս, օրինակ, Գ. Սևակ. Հայոց լեզվի շարահյուսություն. Երևան, 1981, էջ 32 (այսուհետև՝ ՀՀ):

5 Գ. Զահուկյանը ստորոգյալ—ենթակա հարցի նկատմամբ չորովի մոտեցում ունի. «ենթական նախադասության՝ որպես հարցման ակտի կենտրոնն է»,— գրում է նա (Գ. Զահուկյան. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ. Երևան, 1974, էջ 388), բայց ի վերջո նա ևս ստորոգյալի ըմբռնումը պայմանավորում է ենթակայով. «նախադասության կենտրոնը ենթական է, և ստորոգյալը կոչված է բացահայտելու նրա այս կամ այն վիճակը» (էջ 404, նաև՝ էջ 388—418):

Մեր խոսքը մասնավորելով միակազմ դիմավոր կամ անենթակա նախադասություններն զրա, պետք է նշենք, որ նրանցում ենթական ոչ թե ղեղչված է, այլ չկա, իմաստով էլ չկա և հնարավոր էլ չէ, նախադասության բովանդակությունը պա՛պանելով, վերականգնել: Այդ նախադասություններում, ըստ նրանց բնույթի, ենթակայի կառիճն էլ չկա. ինչպես՝ «Իրիկնացավ» (Բ), «Մթնեց» (Թ), «Երկաթը տար տաք կծծենա», «Մեր սարձումը շուտ է լուսանում» և այլն: Սրանցում ենթակա չկա, և նրա կառիճն էլ չկա ու, իրոք որ, նրանք անենթակա ես կամ միակազմ դիմավոր: Եվ դա ինքնրստիքյան նշանակում է, որ նրանցում չկա այն անդամը (ենթական), որի հատկանիշը ստորոգյալը պետք է արտահայտեր: Եթե չկա այդ անդամը՝ ենթական, ուրեմն չկա նաև նրա հատկանիշը և չկա ու չի կարող լինել այդ շեղած հատկանիշն արտահայտող և շեղած ենթակային վերադրող միավոր, այսինքն՝ ստորոգյալ: «Իրիկնացավ»-ը պարզապես մեկ դիմավոր բայով արտահայտված անենթակա նախադասություն է, «Սրունքը արյունով շեն լվանա»,— դիմավոր միակազմ (անենթակա) նախադասություն է, որի դիմավոր անդամը արտահայտված է դիմավոր բայով, նույնը «Երկաթը տաք տաք կծծենա»,— դիմավոր միակազմ նախադասություն է, որի միակ դիմավոր անդամը արտահայտված է դիմավոր բայով:

Որոշ լեզվաբաններ, ընդունելով ենթական ու ստորոգյալը որպես երկկազմ նախադասության դիմավոր անդամներ, ստորոգյալը սահմանելով որպես ենթակալի հատկանիշն արտահայտող և նրան վերադրող միավոր, հակասելով իրենց, միակազմ նախադասությունների մեջ նույնպես ստորոգյալ են դնում: Օրինակ, Ջոնսոն, Խարզել Բավախարաբի աշխատանքը անդամ նախադասություններում և դրանց նմաններում անորոշ դերբայները համարում են ստորոգյալ, Կամ՝ «Մրնկ», «Լուսանում է», «Ճտերն աշնանն են հաշվում», «Ամեն բանից երեւում է» և համաձայն միակազմ նախադասությունների մեջ դիմավոր բայերով արտահայտված դիմավոր (դերբայ) անդամները համարում են ստորոգյալ և հետևություններ անում դրա «հիմքի» վրա:

Ձևաբանական մակարդակում դիմավոր բայի դեմքն ու թիվը սովորաբար սահմանվում են իրրև զոչականի (էլամ զոչականական խոսքի մասի) դեմք ու թիվ և կամ որպես ենթակայի (սուբյեկտի) դեմք ու թիվ: Կարող է թվալ, թե ձևաբանական տեսանկյունից միակազմ դիմավոր (անենթակա) նախադասություն լինել չի կարող, բանի որ շարահյուսորեն դիմավոր բայը կարծես անպայման պետք է ունենա ենթակա, որը այդ բայի դեմքի ու թվի տերն է և նրա ցույց տված դորոտություն կատարողը: Այդ հողի վրա աստիճան է եկել մի պատկերացում, ըստ որի հայերենի միակազմ դիմավոր համարվող նախադասություններն իբր իրականում երկկազմ են: Օրինակ, ասվում է, թե «Մթնեց» և «Օրը մթնեց» իմաստով հոմանիշ և բերականորեն համարժեք նախադասություններ են: Սա թյուրիմացության արդյունք է: «Օրը մթնեց» բերականորեն (շարահյուսորեն) համարժեք է «Ինքը մթնեց» կամ «Երկինքը մթնեց», «Լեռը մթնեց» նախադասություններին, որոնք բոլորը երկկազմ կառույց ունեն (ենթակայով և ստորոգյալով), թեև բովանդակությամբ հոմանիշ չեն, տարբեր իմաստներ են արտահայտում: Մինչդեռ «Մթնեց»-ը «Օրը մթնեց»-ից կամ «Ինքը մթնեց»-ից տարբեր է ոչ միայն իմաստով, այլև բերականորեն, այսինքն՝ շարահյուսորեն, բանի որ, իրոք, միակազմ է: Միանգամայն սխալ և ոչ բերականական է այն մոտեցումը, ըստ որի իբր «Մթնեց» նախադասության «ներսում» կա ենթակա: Եթե կա ենթակա, ուրեմն միակազմ կառույց չէ: Բայց ո՛ր է ենթական: Շարահյուսագիտության մեջ ենթակա ասելով հասկանում ենք բերականական ենթակա, որը հայերենի համար նշանակում է շարահյուսական մի միավոր, որ ունի ուղղական հղում և դեմքով ու թիվով համաձայնում է ստորոգյալի հետ: Հիշենք.

Մթնեց, Ծեղունին լուռ շարձարանքով
Մի բանի կոճղեր դրեց կրակին,
Նորից բարեկց իր երկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել դոնադին ⁽⁶⁾:

Այստեղ ակնհայտ է, որ «Մթնեց» նախադասությունը թե՛ բերականորեն, թե՛ ըստ իմաստի չունի ենթակա՝ ո՛չ «դրսում», ո՛չ «ներսում»: Սա նախադասության հատուկ տեսակ է,

6 Տե՛ս, օրինակ, ՀԼ, էջ 276:

7 Տե՛ս, օրինակ, ՀԼ, էջ 276, 277, 280—284: Ս. Գյուլբեկյան. Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում. Երևան, 1967, էջ 38—118: ԺՀԼ, 161—162:

Հատուկ բովանդակությամբ, որը ոչ միայն շունի ենթակա, այլ որին ենթակա պետք չէ, ավելորդ է, քանի որ նրա հատուկ բովանդակությունը ճենց ենթակայի շգոյությամբ է արտահայտվում: Կնշանակի «Մթնեց» նախադասության բայական դեմքն ու թիվը բնավ չեն ցույց տալիս, չեն ենթադրում որևէ տեսակ ենթակա, քերականորեն բովանդակազրկված են, մթադնված: Նույն քառատողում ունենք «Նորից բարեց իր ևրկրի կարգով» նախադասությունը, որտեղ թեև առանձին բառով ենթակա չկա (դեղչված է), բայց որը ենթակայով երկկազմ նախադասություն է, և նրանում բարեց դիմավոր բայը իր եղակի երրորդ դեմքով անպայման արտահայտում է ենթակա՝ նա կամ ձեռնուն, որը և գործողության (բարեցում) կատարողն է: Նույնը և «Ու բարի մտղթեց չահել ղոնաղին» նախադասության մեջ մտղթեց-ը իր եղակի երրորդ դեմքով ցույց է տալիս ենթակա (որը նույնպես զեղչված է):

Այսպես, միակազմ «Մթնեց»-ը լեզվի, տվյալ դեպքում՝ հայերենի արտահայտչական յուրովի մի հարստության դրսևորում է, որ իմաստային նրբություն է պարունակում, և այն արհեստականորեն «դարձնել» երկկազմ, ենթակայով, նշանակում է սքողել, քերականորեն չներկայացնել լեզվի այդ հարստությունը:

Վերցնենք այլ օրինակ. «Իրիկնացավ: Նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, գոտկատեղում՝ պողպատե փայլուն մանգաղը» (Բ): Դարձյալ կոպիտ սխալ կլինի կարծել, թե «Իրիկնացավ» նախադասությունը շարահյուսորեն և իմաստով նույնն է, ինչ և «Օրը իրիկնացավ»-ը: Եվ դարձյալ՝ դրանք իմաստի նրբությամբ տարբեր են, որ արտահայտվում է շարահյուսական կառույցի տարբերությամբ ու հակադրությամբ: Ունենք միակազմ (անենթակա) և երկկազմ կառույցների հակադրություն:

«Հիմնարկում շատ էին խոսում նրա վարքի մասին». այստեղ էլ խոսում էին-ը բնավ չի ենթադրում ենթակա, քանի որ «Հիմնարկում նրանք շատ էին խոսում...», կամ «Հիմնարկում աշխատակիցները շատ էին խոսում...» ենթակա (նրանք, աշխատակիցները) ունեցող կառույցները իմաստով տարբեր են անենթակա, միակազմ կառույցից, որտեղ բնավ պետք չէ խոսողի՝ անողը, այլ ըստ իմաստի հենց պետք է նրա չլինելը, անորոշությունը՝ «Հիմնարկում շատ էին խոսում...»: Սա ևս լեզվաարտահայտչական հարստություն է և մի լեզվի շարահյուսական նկարագրության մեջ պետք է նշվի: Իսկ դա նշանակում է նշել, որ այս բնույթի նախադասությունները նույնպես ենթակա չունեն, և մանավանդ նրանցում էլ ենթակա պետք չէ: Ասել, թե գրանցում ենթակա կա, որ այն ինչ-որ տեղ թաքնված է ու նման բաներ, նշանակում է սքողել լեզվի տվյալ արտահայտչական հարստությունը ևս, քերականորեն չնկարագրել այն:

Հայերենում դիմավոր միակազմ նախադասությունների կառույցային առանձնահատկությունը որևէ տեսակ ենթակայի լիակատար բացակայությունն է, և նրանցում դիմավոր բայի դեմքն ու թիվը ենթակա չեն ցույց տալիս, ենթակայազուրկ են: Ի դեպ, մի շարք լեզուների շարահյուսական նկարագրություններում միակազմ նախադասությունների «դիմավոր» բայերը կոչվում են անդեմ (ռուս. безличные глаголы)⁸:

Իրոք, «Մթնեց», «Իրիկնացավ», «Լուսացավ» կամ «Մեր լեռներում շուտ է մթնում», «Վերջապես լուսացավ» և նման միակազմ նախադասություններում բայը ըստ ֆեռականական

⁸ Ռուս դասական լեզվաբանությունը (Ա. Պեշկովսկի, Վ. Բոգորոդիցկի, Ա. Շախմատով և ուրիշներ), ինչպես և ժամանակակից ռուս լեզվաբանների մեծ մասը «Степно», «Морозит», «Снегом занесло» և այսպիսի այլ անենթակա նախադասություններն ու նրանց բայերը համարել և համարում են անդեմ (թեև այդ բայերը շարահյուսական մակարդակում ստորոգյալ անվանելու կամ չանվանելու վերաբերյալ միասնականություն չկա): Գերմանական, անգլիական քերականագիտություններում նույնպես նման մոտեցումներն են իշխում: Նույնիսկ գերմաներենում ու անգլերենում, որոնց անենթակա նախադասությունների մեջ լինում է ձևական ենթակա (es, it), այնուամենայնիվ Es regnet, It rains և նման նախադասություններն ու նրանց բայերը համարվում են անդեմ (unpersönlich, impersonal): Գ. Ջահուկյանը անենթակա նախադասությունների մասին այնպես է գրում (նշվ. աշխ., էջ 292—396), որ կարող է թվալ նաև, թե նա այդ նախադասություններն ըստ էության ենթակայով է համարում, բայց և նշում է. «Որոշյալ-դիմավոր նախադասությունները հակադրվում են մնացած հրեք տիպերին, որոնք սովորաբար միավորվում են «անենթակա» անվան տակ: Այս երեք տիպի նախադասությունների դեպքում բայի դեմքի ձևը դադարում է իր բուն ցուցանիշները կատարելուց (նույն տեղում, էջ 392, ընդգծումը մերն է—Ռ. Ի.):

Նշանակությամբ անդամ է. քանի որ ենթակա չի ենթադրում, և այդ նախադասություններն չեն
տրվող միակզմ գիմավոր անվանումը պայմանական է⁹:

Եվ այսպես. քանի որ միակողմ դիմավոր նախադասություններում բայի դեմքն ու թիվը հնթակայադուրկ, մթադնմած են, և նախադասությունը շունի քնականական ենթակա, կնշա-
նակի շունի ու չի կարող ունենալ նաև նրա հատկանիշն արտահայտող և նրան վերագրվող
միավոր՝ ստորոգյալ:

Կամ պետք է լիովին հրաժարվել նախադասությունների երկկազմ—միակազմ հակադրու-
թյունից և ստորոգյալի վերոհիշյալ սահմանումից (որ, ինչպես ասվեց, ահհնար է՝ ստորոգ-
յալին իրրե շարահյուսական միակտր ընդունելուց հետո), կամ եթև դրանք պահպանվում են,
պետք է հրաժարվել միակազմ որևէ տեսակ նախադասություն մեջ գերադաս անդամը ստորոգ-
յալ և կամ ենթակա համարանդր:

Միակամ դիմվոր նախադասութիւնները պարզապէս արտահայտւում են բայով («Մթնեց») կամ իրրէ գլխավոր (գերադաս) անդա: ունենում են բայ («Շուտ մթնեց»), որի չլմբը ենթակայութիւն է:

3. Ուղիղ խնդիր

[illegible]

Այդ երկու կառույցները ներկայացնենք օրինակներով. Կառույց № 1 «Տիգրանը սիրում է Շուշանին», կառույց № 2 «Շուշանը սիրվում է Տիրգանից»:

Այս կառույցները փոխադարձաբար փոխակերպելի են (մեկը փոխակերպվում է մյուսին)։ Նրկուն էլ արտահայտում են ճիշտ միևնույն բովանդակությունը. տվյալ դեպքում այն, որ Տիդրանը սիրում է Շուշանին, այսինքն՝ Շուշանը սիրվում է Տիդրանից։ Նրանց տարբերությունը քրականական է, ինչպիսի նաև ոճական։ № 1-ի ենթական № 2-ում դրավել է խնդրի դիրք, իսկ խնդիրը՝ ենթակայի, և № 2-ի ենթական № 1-ում խնդիր է, խնդիրը՝ ենթական։ Այս երկու կառույցների քերականական տարբերությունն արտահայտվում է երեք կետով, դրանք են. ա) № 1 կառույցում բայի արտահայտածի (սիրելը) իրագործում է կամ կատարում է ենթական (Տիդրանը), սիրողը նա է, այսինքն՝ ենթական գործող է (activ), № 2 կառույցում ենթական (Շուշանը) բայի արտահայտածի (սիրելը) չի կատարում (սիրողը նա չէ), այսինքն՝ չգործող (passiv) ենթակա է։ Այսպիսով, ըստ դիմավոր բայի արտահայտած բովանդակության իրացման № 1-ում առկա է գործող, № 2-ում՝ չգործող ենթակա։ բ) № 1-ում խնդիրը (Շուշանին) բայի արտահայտածի կատարողը չէ (սիրողը չէ), առարկան է, իսկ № 2-ում խնդիրը (Տիդրանից) բայի արտահայտածի կատարողն է (սիրողը)։ գ) № 1-ում դիմավոր բայը չունի վ մասնիկ (սիրում է), № 2-ում դիմավոր բայն ունի վ մասնիկ (սիրվում է), որ նշանակում է, թե № 1-ում բայն ունի զրո մասնիկ, և առկա է միևնույն բայի զրո մասնիկավոր և վ մասնիկավոր ձևերի քերականական հակադրություն։

Դիմեալ անձը իր կողմից հանձնարված փաստաթուղթերից հետո, քաղաքացիական ծառայության ղեկավարը կարող է ընդհատել ծառայության հարաբերությունը և ղեկավարի կողմից կատարված աշխատանքի որակի վերաբերյալ արժեքային գնահատականներ տրամադրել, որոնք կհանգեցնեն ծառայության ղեկավարի կողմից անհատի աշխատանքի որակի վերաբերյալ արժեքային գնահատականների հիմնարկի վրա:

⁹ Այն կարծիքին եեր, որ դա հայերենի համապատասխան երևութների համար ընդհանուր արվամբ ավելի հաջող անվանում է (կարծեմ, առաջինը մեղանում գործածել է Ս. Աբրահամ-յանը), քան անեմբական նախադասություն-ը. Փաստ է, որ ձեռագրն, ենթակալադուրկ դիմքն առկա է այդ միակազմ նախադասությունների բալերի մեջ, իսկ անեմբական նախադասություն անհաջող է թեկնիզ այն պատճառով, որ կարծես ենթադրում է ստորոգյալի առ-
հանվածություն:

«Հյուրերն ընդունվեցին նախագահի կողմից», «Սահակյանը բարձրացրեց ծանրաձողը» և «Ծանրաձողը բարձրացվեց Սահակյանի կողմից» և այլն:

Հայերենի բայերի միայն մի մասն ունի ներգործական և կրավորական հակադիր կառույցներ գոյացնելու ունակություն: Դրանք այն բայերն են, որոնք ունեն զրո և Վ մասնիկավոր ձևերի հակադրություն և զրո մասնիկի դեպքում ունենում են գործող, Վ մասնիկի դեպքում՝ չգործող ենթականեր, նաև՝ առաջին դեպքում չգործող, երկրորդ դեպքում գործող խնդիրներ: Այնպիսի և լիովին պայմանական անունով դրանք կոչվում են անցողական բայեր, այդ ընդունակությունից զուրկ բայերը՝ անանցողական:

Արդ, դառնա՞նք երկու հակադիր կառույցների մեջ եղած խնդիրներին. № 1 կառույցի խնդիրը համապատասխանաբար կկոչվի ներգործական սեռի խնդիր, № 2 կառույցինը՝ կրավորական սեռի խնդիր: Ներգործական սեռի խնդրի ավելի տարածված անունն է ուղիղ խնդիր: Այս խնդիրը զուտ քերականական միավոր է. նրա իրավոր տարբերիչ հատկանիշները երկուսն են: Առաջին հատկանիշը. — ուղիղ խնդիրը դառնում է ենթակա, երբ ներգործական կառույցը փոխակերպում ենք կրավորականի, ինչպես՝ «Ես սիրում եմ արտերը ոսկի» (Տ) նախադասության մեջ արտերը ուղիղ խնդիր է, քանի որ կա փոխակերպում, որտեղ այն դառնում է ենթակա. «Արտերը ոսկի սիրվում են իմ կողմից»: Կամ «Դարձան արևը մեզմ տաքացնում էր գետինը» (Բ). այստեղ գետինը ուղիղ խնդիր է, քանի որ առկա է «Գետինը մեզմ տաքացվում էր արևից» փոխակերպումը, որտեղ գետինը դարձել է ենթակա: Այլ օրինակ. «Նա ճանաչում էր արևաց անտառի գող ուրուրին» (Մթ). ուրուրին ուղիղ խնդիր է, քանի որ ենթակա է դառնում հետևյալ փոխակերպման դեպքում. «Դիմաց անտառի գող ուրուրը ճանաչվում էր նրա կողմից»:

Ուրեմն, ուղիղ խնդրի այս առաջին հատկանիշը առնչված է ներգործական և կրավորական կառույցների հակադրության ու նրանց փոխադարձ փոխակերպման առանձնահատկության հետ (այստեղ՝ շեղումների և բացառությունների վրա կանգ չենք առնում, արձանագրում ենք ընդհանուր կանոնը):

Երկրորդ հատկանիշը. — ուղիղ խնդիրն ունի կրկնակ ձևավորում. դրվում է ուղղական և տրական հոլովներով (ըստ յոթ հոլովի համակարգի՝ ուղղականաձև և տրականաձև հայցականանիքով): Օրինակներ. ուղղական հոլովով՝ «Թողի երկիրն իմ հայրենի» (Տ), «Տեսա «Մարդիկ չորս գլխանի» (Տ), տրական հոլովով՝ «Ես սիրում եմ մայրիկին» (Բ), «Հասուն փառերին էր դողացնում» (Փ), «Մոխրոտերը խեղդում էին վաղահաս ծաղիկներին» (Բ):

Եթե լրացումը այս երկու հոլովներից որևէ մեկով չի ձևավորված, այլ դրված է մի այլ հոլովով կամ ունի կապային ձևավորում, այն ուղիղ խնդիր չէ: Օրինակ. «Աղաթթուն ազդեց մարմաբի վրա» նախադասության մեջ մարմաբի վրա լրացումը կապային է (ոչ հոլովային), կնշանակի հենց միայն դրանով այն արդեն ուղիղ խնդիր չէ:

Միաժամանակ, ուղղական կամ տրական հոլովներից որևէ մեկով դրված լինելը դեռ ինքնըստինքյան չի նշանակում, թե լրացումն ուղիղ խնդիր է (ուրիշ շատ միավորներ էլ են դրվում այդ հոլովներով): Այդ նախադրյալը անպայման պետք է ունենա նաև հետևյալ զրտեվորումը. ուղղական և տրական հոլովներով դրված ուղիղ խնդիրները մեծ մասամբ փոխադարձաբար փոխակերպելի են լինում, այսինքն՝ միևնույն բայը կարող է առնել և՛ մեկ, և՛ մյուս հոլովով ուղիղ խնդիր, ինչպես՝ «Մայրը բծիշկ հրավիրեց» և «Մայրը այն բծիշկն հրավիրեց», «Մի մրահոն աղջիկ տեսա» (Ի) և «Այն մրահոն աղջկան տեսա», «Նա մի տղա էր կախել» և «Նա իր տղային էր կանչել» և այլն:

Այստեղ չենք քննում ուղիղ խնդրի կրկնակ ձևավորման իմաստային կողմը, միայն արձանագրում ենք, որ այդ ձևավորումը ուղիղ խնդրի երկրորդ տարբերիչ հատկանիշն է (այստեղ էլ կան շեղումներ ու բացառություններ, որոնց նույնպես չենք անդրադառնում):

Այս երկու հատկանիշներից եթե որևէ մեկն էլ ունենում է բայի խնդիրը, կնշանակի այն ուղիղ խնդիր է (առաջին հատկանիշն. ունենալու դեպքում, անշուշտ, պարտադիր է ուղղական կամ տրական հոլովը): Օրինակ. «Նա նկատել էր այդ մարդուն» նախադասության մեջ մարդուն խնդիրն ունի վերահիշյալ հատկանիշներից երկուսն էլ: Փոխակերպում. «Այդ մարդը նրկատվել էր նրա կողմից» (որտեղ խնդիրը ենթակա է դառնում) և կրկնակ ձևավորում (տրականն ունի ուղղական զուգահեռը)՝ «Նա մի մարդ էր նկատել»: Սակայն «Ես գիտեմ մի մարդ» նախադասությունը կրավորական կառույցի չի փոխակերպվում, բայց մարդ խնդիրն ունի տրական հոլովով կրկնակ, ինչպես «Ես գիտեմ մի մարդու», կնշանակի ուղիղ խնդիր է (թեև, հավանա-

որար, ավելի թույլ արտահայտված)՝ 10: Մյուս կողմից՝ «Տանտիրուհին թափեց կծի ջուր» նախադասության մեջ ջուրը խնդիրը շունի տրական հոլովով կրկնակ (բացառված է բաժնից ջրին տարբերակը), բայց կա փոխակերպում՝ «կծի ջուրը թափվեց տանտիրուհու կողմից»։ ջուրը դարձավ ենթակա, կնշանակի այս մի հատկանիշով արդեն լրացումն ուղիղ խնդիր էր։

Այսպիսով. «Անցողական բույի այն խնդիրը որը դրվում է ուղղական կամ տրական հոլովով և կարող է ենթակա դառնալ նախադասության ներդրական կառույցը կրավորականի փոխակերպելիս կամ ունենալ կրկնակ ձևավորում (ուղղական-տրական), կոչվում է ուղիղ խնդիր»։

Կան մի քանի բայեր՝ ունեմ, ունեցալ, ուզել և այլն, որոնց անցողական թե անանցողական լինելը անհնար է ստույգ որոշել և որոնց ուղղականով դրվող խնդիրը, թեև շունի ուղիղ խնդրի երկու հատկանիշներից ոչ մեկը, բայց ավանդաբար համարվում է ուղիղ խնդիր. ինչպես՝ «Իսկ նա ուզում» (Բ), «Նա ունեմ անտառներ. հողեր» (Բ)։ Ընդգծվածները ավանդաբար համարվում են ուղիղ խնդիր, ուստի դրանք կառող են դիտվել բացառություն և կոչվել ավանդական ուղիղ խնդիր։

Այս դեպքում ուղիղ խնդրի երկու հատկանիշներից որեւէ մեկը չունեցող լրացումը ուղիղ խնդիր չէ։ Օրինակ, «Անահ անցա Արար ու Հինդ» (Տ), «Մի ձիավոր ձին թափով բռնեց՝ անցավ փողոց» (Բ), «Սոնան տաքածուրյունի վաղեց 32 վարկանում» նախադասություններում ընդգծված լրացումները որոշակիորեն ուղիղ խնդիր չեն և խնդրառու բայերն էլ որոշակիորեն անցողական չեն։

Եթե ուղիղ խնդրի այս երկու առանձնահատկությունները և սրանց համաձայն կաղված սահմանումը դանդաղ առնենք, անհնար կլինի այդ լրացումը որպես բերականական միավոր բնութագրելու։

Հայ բերականագիտության մեջ օգտագործվում է ուղիղ խնդրի ոչ բերականական (իմաստային) սահմանում։ Ահա դրա երկու տարբերակը. «Ուղիղ խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որը ուղղակի կերպով իր վրա է կրում ստորոգյալով արտահայտված գործողությունը»¹¹. «Այն խնդիրը, որ ցույց է տալիս գործողության անմիջական առարկան, որի վրա է անցնում ենթակայի գործողությունը, կոչվում է ուղիղ խնդիր»¹²։

Այս սահմանման և նրա բոլոր տարբերակների էությունը հետևյալն է. ա) ուղիղ խնդիրը իր վրա է կրում ենթակայի կատարած գործողությունը (կամ ուղի գործողությունն անցնում է ուղիղ խնդրի վրա) և բ) ուղիղ խնդիրը ցույց է տալիս գործողության անմիջական առարկան։

Հմեր կողմից այս սահմանումները (որոնք, ի դեպ, հաուց լեզվի նյութի վրա չեն կաղվել) այժմ խորհրդանշական արժեք են ստացել, և կրել, անցնել ու անմիջական առարկա ասելով սովորաբար անստույգ ինչ-որ ըմբռնում են ենթադրում կամ դրա տակ հասկանում են քերականական իրողություն։ Իսկ եթե այդ կարգի սահմանումը հասկանանք այնպես, ինչպես այն ձևակերպված է, այսինքն իր սովորական իմաստով և փորձենք նրա դրույթները ստուգել հաուց լեզվի փաստերով, կտեսնենք, որ այդպիսի սահմանումը բնավ չի համապատասխանում արդի հայերենի շարահյուսության նյութին։

Նախ կրելու մասին ձիշտ է, ուղիղ խնդիրների մի մասը ցույց տալիս է ենթակայի գործողությունը կրող առարկա, բայց ավելի մեծ մասը նման առարկա բնավ չի ցույց տալիս։ Օրինակ, «Երեխան չարդեց բաժակը»։ Իրոք, բաժակը ուղիղ խնդիրն իր վրա կրում է չարդելու գործողությունը (չարդվում է)։ Բայց երբ ասում ենք «Երեխան նկատեց բաժակը», այսպիսով է, որ բաժակը ուղիղ խնդիրը որեւէ կերպ չի կրում երեխայի նկատելը և չի կարող այն կրել։ Հակառակն է կատարվում. բաժակի պատկերը ընկնում է երեխայի աչքին և աչքի ցանցաթաղանթն է «կրում» այդ պատկերը։ Նույնը և՛ «Ձեռքն զլխարկով մարդը նկատեց սլաքիսկերի փվածքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը» (Բ)՝ նախադասության մեջ. հաս-

10 Արդի հայերենում ուղղական-տրական կրկնակ ձևավորումը միայն ուղիղ խնդրի հատկանիշն է։ Հաղվագրուտ դեպքում, իրեն բացառություն, այն հանդիպում է այլ կարգի լրացումների մեջ, ինչպես «Ձեռքից զանձնեցի Սատենադարան» և «Ձեռքից հանձնեցի Սատենադարան»։

11 ԺՀ, 213։

12 ՀՀ, 55։

կանալի է, որ պարսպի՝ փլվածքը, սրածայր բուրգը, հետքերը իրենց վրա չեն կրում և չեն կարող կրել մարդու նկատելը: Կամ՝ «Երեխան տեսավ մորը» նախադասության մեջ մոռնալ խնդիրը բնավ չի կրում երեխայի տեսնելը (ընդ որում, մայրը կարող է նկատած էլ չլինել երեխային), այլ երեխայի աչքի ցանցաթաղանթն է «կրում» մոր պատկերը:

Այդպես են նաև սիրելի, հիշելի, մտաբերելի, մոռանալի, լսելի, ատելի և մտավոր, հոգեկան գործույթ՝ արտահայտող շատ ուրիշ բայերի ուղիղ խնդիրները: Այսպիսի առանձին բայերի հետ, ըստ նախադասության բովանդակության, ուղիղ խնդիրը հրեման կարող է և կրել գործողությունը, բայց դա որևէ կապ չունի բայի և խնդրի բերականական բնույթի հետ: Իբրև օրինակ վերցնենք սիրելի բայը: Այսպես. «Նա սիրում էր մեռնող քաղաքների տենդը» (2) նախադասության մեջ, բնականաբար, տեղը ուղիղ խնդիրը չի կրում և չի կարող կրել (սա ենթակայի սիրելի: Բայց այլ դեպքում սիրելի բայի ուղիղ խնդիրը ըստ նախադասության բովանդակության կարող է և կրել գործողությունը. ինչպես՝ «Ալլախը սիրեց տղային, դրանից աղված, տղան էլ աղչկան սիրեց»: Սերը սեր է արթնացնում: Բայց տղայի այս «կրելը» քերականական չէ, ըստ սեռի չէ, այլ ըստ տվյալ նախադասության բովանդակության: Այս մի այլ նախադասություն նույն սիրելի բայով. «Ալլախը սիրեց տղային, բայց տղան չէր ճանաչում աղչկան և մինչև վերջ էլ չիմացավ նրա սիրո մասին»: Այստեղ էլ որևէ կարգի կրելու մասին խոսք չի: Երբ չի կարող, ինչպես, սիրել բայի ուղիղ խնդիրը քերականորեն չի կարող բնութագրվել իբրև կրող:

Վերցնենք այլ օրինակ՝ Ս. Խանդավանի «Հույսը անթելած» պատմվածքի հետևյալ նախադասությունները. «Որոնում էի մի ափ Լեռնական լիճը», «Կորյրի քարայծի շավիղը», «Ես ուտելու ցանկություն զգացի»: Մի՞թե պարզ չէ, որ լիճը, շավիղը, ցանկություն ուղիղ խնդիրները չեն կրում որոնելու, կորցնելու, զգալու գործողությունները: Նույն պատմվածքում «Սանձը թուլացրի» կամ «Զիտս սանձը բռնեց» նախադասություններում սանձը ուղիղ խնդիրը ինչ-որ կերպ կրում է թուլացնելու, բռնելու գործողությունները: Իսկ «Մի սև դամփո հոտոտեց ոտքերս» նախադասության մեջ էլ չի կարելի հաստատ ասել, թե ստիքս ուղիղ խնդիրը արդյոք կրում է հոտոտելու գործողությունը, թե՛ ոչ:

Սրան պետք է ավելացնել, որ, իրոք, գործողությունը կրող ուղիղ խնդիր առնող այնպիսի բայեր, ինչպես՝ ջարդել, կառուցել, բերել, բռնել, թուլացնել և այլն, գործածվելով ժխտական խոնարհմամբ, այլևս չեն ունենում այդ կարգի խնդիր: Օրինակ. «Երեխան բաժակը չջարդեց», «Զիտս սանձը չբռնեցի» և այլն: Պարզ է, որ այսպիսի դեպքերում բաժակը և սանձը որևէ կերպ չեն կրում չջարդելը և չբռնելը: Բայց չէ՞ որ ամեն մի հաստատական նախադասություն ունենում է իր ժխտական տարբերակը. կնշանակի նույնիսկ կրելու գործողություն ցույց տվող անցողական բայեր ունեցող նախադասությունների կեսի մեջ արգեն իսկ ուղիղ խնդիրները կրող չեն: Մինչդեռ այդպիսի բայերը անցողական բայերի գծով մի մասն են:

Մյուս կողմից, շատ դեպքեր կան, երբ առարկան ակնհայտորեն գործողությունը կրում է, բայց ուղիղ խնդիր չէ. օրինակ, «Նա մատը դրեց երեխայի աչքին», «Երեխան օգնում է մորը», «Անապաստանը թեց նրա դեմքին», «Նա հարձակվեց ինձ վրա» նախադասություններում աչքին, մորը, դեմքին, ինձ վրա խնդիրները կրող են, բայց ուղիղ (ներգործական սեռի) խնդիրներ չեն, քանի որ չունեն ուղիղ խնդրի վերահիշյալ հատկանիշներից և ոչ մեկը:

Այս ամենը ցույց է տալիս, որ արդի հայերենում ուղիղ խնդիրը բնութագրելիս՝ այն որևէ կերպ չպետք է առնել գործողությունը կրելու կամ չկրելու հարցի հետ:

Ուղիղ խնդրի համար տարբերիչ հատկանիշ չէ նաև գործողության անմիջական թե՛ ոչ անմիջական առարկա լինելը, որ ընդհանրապես անիմանալի է: Ոչ ոք չի կարող ասել, թե հետևյալ երկու խնդիրներից որն է անմիջական և որը՝ ոչ անմիջական. «Քուռակը նայում էր մորը» (Մթ) և «Քուռակը տեսնում էր մորը» (Մթ). ո՞ր դեպքում է մորը խնդիրը գործողության անմիջական և ո՞ր դեպքում ոչ անմիջական առարկա: Անիմաստ է այս հարցի մասին մտածել և նրա շուրջը վեճ բացել, քանի որ անհնար է մի որոշում հանել, իսկ եթե որոշում հանվի էլ, այն առնչություն չի ունենա քերականության հետ. մինչդեռ բերված օրինակներից առաջինում (նայում էր մորը) առկա է անուղղակի խնդիր, երկրորդում (տեսնում էր մորը)՝ ուղիղ: Բայց խնդիրների այս տարբերակումը որևէ առնչություն չունի անմիջական թե՛ ոչ անմիջական առարկա լինելու հետ:

Այլ օրինակ. «Ծերուկը ձեռնափայտը թեթևակի խիեց դռանը» և «Ծերուկը ձեռնափայտով թեթևակի խիեց դռանը». երկու դեպքում էլ ծերուկը ճիշտ նույնն է կատարում, բայց գոր-

ձողության առարկան (որը կամ որով խփում է) երկու ձևով է արտահայտված: Այդ ձևերից միայն մեկն է ուղիղ խնդիր (ձեռնափայտը), սակայն բնավ ոչ այն պատճառով, որ մյուսից ափելի անմիջական առարկա է ցույց տալիս: Թե՛ ձեռնափայտը, թե՛ ձեռնափայտով-ը ճիշտ միևնույնը կատարող, միևնույն առարկան են ցույց տալիս և բացարձակապես անիմաստ է փորձել որոշել այդ «առարկաների» անմիջականության աստիճանը, մանավանդ որ դա որևէ կապ չունի բերականության հետ:

Ձեռնափայտը ուղիղ խնդիր է սոսկ այն պատճառով, որ ունի այդ լրացման առաջին հատկանիշը՝ նախադասությունը կրավորական կառույցի փոխակերպելիս, դառնում է ենթակա. «Ձեռնափայտը ծերուկի կողմից թեթևակի խփվեց դռանը», իսկ ձեռնափայտով-ը ուղիղ խնդիր չէ, քանի որ չունի այդ լրացման բերականական հատկանիշներից և ոչ մեկը. չի կարող փոխակերպվել ենթակայի և դրված չէ ուղղական կամ տրական հոլովով:

Ստորև բերված է 20 օրինակ, որոնց մեջ ընդգծված լրացումները ուղիղ խնդիր են սոսկ այն պատճառով, որ ունեն այդ լրացման դուրս բերականական երկու հատկանիշները կամ նրանցից մեկը:

1. Նա հանդիպեց ընկերոջը, 2. Նա մոռացավ ընկերոջը, 3. Նա փարվեց ընկերոջը, 4. Նա չլուցրեց ընկերոջը, 5. Նա հիշեց ընկերոջը, 6. Նա բարեկեց ընկերոջը, 7. Նա օգնեց ընկերոջը, 8. Նա բացատրեց (դասը) ընկերոջը, 9. Նա խանգարեց ընկերոջը, 10. Նա ազդեց ընկերոջ վրա, 11. Նա հրավիրեց ընկերոջը, 12. Նա մերժեց ընկերոջը, 13. Նա հարձակվեց ընկերոջ վրա, 14. Նա չլքեց ընկերոջը, 15. Նա չհարցրեց ընկերոջը, 16. Նա չգտավ ընկերոջը, 17. Նա խղճաց ընկերոջը, 18. Նա նայեց ընկերոջը, 19. Նա մոտեցավ ընկերոջը, 20. Նա չստեց ընկերոջը:

Այս առաջնորդվենք խնդրի վրա գործողությունը անցնելու կամ խնդրի կողմից գործողությունը կրելու դրույթով, ապա հավանաբար, ուղիղ խնդիր կհամարենք հետևյալ օրինակների լրացումները՝ 3, 7, 9, 10, 13: Մինչդեռ հենց դրանք ուղիղ խնդիրներ չեն: 10-րդ և 13-րդ օրինակներում լրացումները ուղիղ խնդիրներ չեն արդեն իսկ իրենց ձևի պատճառով՝ նրանք կապային են (ընկերոջ վրա), չունեն ուղիղ խնդրին հատուկ հոլովային ձևերից որևէ մեկը: 3-րդ և 13-րդ օրինակներում բայերն իրենց կազմում ունեն վ մասնիկ (փարվեց և հարձակվեց), որ այս դեպքերում բառակազմական ածանցի դեր ունի: Վ-ի առկայությունը բայերում, առաստարակ, բացառում է նրանց ուղիղ խնդիր ունենալու հնարավորությունը:

Հետևյալ օրինակների լրացումները 1, 3, 6, 7, 8, 9, 13, 15, 17, 18, 19 չունեն ուղիղ խնդիր երկու հատկանիշներից և ոչ մեկը. չունեն կրկնակ ձևավորում և ապա, ամենակարևորը, չեն փոխակերպվում ենթակայի: Այդ նախադասությունները կամ ընդհանրապես ներգործական կառույց չունեն (1, 3, 6, 7, 9, 13, 17, 18, 19), ուստի և կրավորականի չեն փոխակերպվում, կամ եթե ներգործական կառույց ունեն (8-րդը) և փոխակերպվում են կրավորականի, ապա ընկերոջը խնդիրը չէ, որ դառնում է ենթակա. օրինակ. «(Դասը) նրա կողմից բացատրվեց ընկերոջը»:

10-րդ օրինակում տրված նախադասությունը փոխակերպվում է կրավորականի և ընկերոջը վրա խնդիրը կարծես դառնում է ենթակա՝ «Ընկերս ազդվեց նրա կողմից», բայց անկախ ամեն բանից, ինչպես ասվեց, ընկերոջը վրա լրացման ուղիղ խնդիր լինելը բացառվում է արդեն նրա կապային ձևավորման պատճառով: (Այդպիսի բայը թեև ուղիղ (ներգործական սեռի) խնդիր չի առնում, բայց ունի ազդելի փոխակերպումը: Սա բացառություն է արդի շայերենի բայական համակարգում):

Բոլոր բառն օրինակներից միայն ութում են ընկերոջը լրացումները ուղիղ խնդիրներ՝ 2, 4, 5, 11, 12, 14, 16, 20, քանի որ՝ ա) այդ օրինակների նախադասությունները փոխակերպվում են կրավորական կառույցների և ընկերոջը խնդիրը դառնում է ենթակա՝ ընկերը. օրինակ՝ 2. «Ընկերը մոռացվեց նրա կողմից», 5. «Ընկերը հիշվեց նրա կողմից», 11. «Ընկերը չհրավիրվեց նրա կողմից» և այլն, բ) այդ օրինակներում ընկերոջը տրական հոլովով խնդիրը կառուցվում է փոխարինվել ուղղական հոլով ունեցող խնդրով. օրինակ՝ 2. «Նա մոռացավ այդ դեպքը», 5. «Նա հիշեց այդ դեպքը», 11. «Նա մտադ չհրավիրեց», 12. «Նա մերժեց նրա խնդիրը» և այլն:

Հայերենում միմյանց են հակադրվում նաև սեռի ու ոչ սեռի (կամ բնույթի, բնության, ֆանդիտների): Քանի որ սեռի խնդիրները երկուսն են՝ ներգործական սեռի (ուղիղ) և կրավոր-

րական սեռի (գործող) խնդիրներ, ուստի սրանցից զատ բոլորը ոչ սեռի կամ բնույթի խնդիրներ են: Առավել ընդունված անունով արանք կոչվում են անուղղակի խնդիրներ: Երբեմն կրավորական սեռի խնդիրն էլ են դնում անուղղակի խնդիրների մեջ, որ բերականորեն անճիշտ դասակարգում է:

Հապավումներ. — Ռ—Ա. Բակունց, Թ—Հ. Բումանյան, Ի—Ա. Իսահակյան. Մթ—Հ. Մաթևոսյան, Չ—Չարենց, Տ—Վ. Տերյան, Փ—Վրթ. Փափազյան:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ АРМЯНСКОГО СИНТАКСИСА

Доктор филол. наук Р. А. ИШХАНИЯН

(Резюме)

В статье рассматриваются вопросы, касающиеся послеложно-предложных словосочетаний, характера главного члена «личных» односоставных предложений и грамматической сущности прямого дополнения в современном армянском языке. В роли синтаксических «связок» в новоармянском языке в основном выступают послелогии, большинство из которых сохраняет грамматические особенности существительного (склонение и др.) Со своими дополнениями они составляют полноценные словосочетания, и нет основания исключать их из числа словосочетаний, как это делает большинство авторов. Синтаксически определяемое сказуемое неразлучно с грамматически выделенным подлежащим; следовательно, главный член «личных» односоставных, т. е. бесподлежащих, предложений не есть сказуемое, а форма личного глагола в этих предложениях по своему значению является безличной. Прямое дополнение в армянском языке имеет два грамматических свойства: оно 1) при трансформации активной синтаксической конструкции в пассивную превращается в подлежащее; 2) оформляется именительным и дательным падежами. Неграмматические традиционные определения прямого дополнения не имеют под собой почвы в современном армянском языке.